# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am*

**N ԴԴ-2-Ե-** 9307

**« 03 » նոյեմբերի 2026թ.**

**«ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի**
**ՏՆՕՐԵՆ Մ. ՍԱՖԱՐՅԱՆԻՆ**
*(հասցե՝ ք. Երևան, Սևանի 116/2)*

***Հարգելի՛ պարոն Սաֆարյան,***

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների, ՀՀ զինանշանների և դրոշների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2026թ. հոկտեմբերի 28-ի որոշմամբ 22-րդ չափաբաժնի մասով «ԲԵԼԼԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 22-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ (eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից անգործության ժամկետ չի սահմանվել):

Տեղեկացնում եմ, որ 22-րդ չափաբաժնի մասով կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով

ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է գնվելիք ապրանքի գնման գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

***Հարգանքով,***

**ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան*
*Հեռ.՝ (+37410) 511-783, 511-788*